ԽՈՒՄԲ **32**

ԴԱԲԱՂՄԱՆ ԿԱՄ ՆԵՐԿՄԱՆ ԼՈՒԾԱՄԱԶՈՒՔՆԵՐ, ՏԱՆԻՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐԸ, ՆԵՐԿԱՆՅՈՒԹԵՐ, ԳՈՒՆԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՆԵՐԿՈՂ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ, ՆԵՐԿԵՐ ԵՎ ԼԱՔԵՐ, ՄԱԾԻԿՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՏԻԿԱ, ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆԵՐԿ, ԹԱՆԱՔ, ՏՈՒՖ

Ծանոթագրություններ.

1. Տվյալ խմբում չեն ընդգրկվում՝

ա) քիմիական որոշակի բաղադրություն ունեցող առանձին տարրերը կամ միացությունները (բացառությամբ 3203 կամ 3204 ապրանքային դիրքերում ընդգրկված արտադրանքի, որպես լյումինաֆորներ օգտագործվող անօրգանական արտադրանքի (ապրանքային դիրք 3206), հալված կվարցից կամ այլ հալված սիլիկահողերից 3207 ապրանքային դիրքում նշված ձեւերով ստացված ապակու, ինչպես նաեւ 3212 ապրանքային դիրքում ընդգրկված ներկանյութերի եւ ներկող այլ նյութերի՝ բաժնեծրարված ձեւով կամ փաթեթավորումով մանրածախ վաճառքի համար).

բ) տանատները կամ 2936 - 2939, 2941 կամ 3501-3504 ապրանքային դիրքերում ընդգրկված արտադրանքի տանինային մյուս ածանցյալները.

գ) ասֆալտային մաստիկաները կամ բիտումային մյուս մաստիկաները (ապրանքային դիրք 2715):

2. 3204 ապրանքային դիրքում ընդգրկվում են դիազոնիումի կայունացված աղերի խառնուրդները եւ ազոներկանյութեր ստանալու համար օգտագործվող բաղադրամասերը:

3. 3203-3206 ապրանքային դիրքերում ընդգրկվում է ներկող նյութերի հիմքով պատրաստված արտադրանքը (ներառյալ 3206 ապրանքային դիրքի դեպքում 2530 ապրանքային դիրքում կամ 28-րդ խմբում ընդգրկված ներկող գունանյութերը, մետաղական փաթիլները կամ մետաղական փոշիները), որն օգտագործվում է ցանկացած նյութ ներկելու համար կամ ներկող միջոցների

արտադրության համար՝ որպես բաղադրամաս: Մինչդեռ այդ ապրանքային դիրքերում չեն ընդգրկվում ոչ ջրային միջավայրում դիսպերսված հեղուկ կամ մածուկանման գունանյութերը, որոնք օգտագործվում են ներկերի արտադրության մեջ, ինչպես նաեւ արծնները (ապրանքային դիրք 3212) կամ 3207-3210, 3212, 3213 եւ 3215 ապրանքային դիրքերում ընդգրկված այլ արտադրանք:

4. 3208 ապրանքային դիրքում ընդգրկվում են 3901 - 3913 ապրանքային դիրքերում ընդգրկված ցանկացած նյութից կազմված լուծույթները (բացի կոլոդիումներից)՝ ցնդող օրգանական լուծիչների մեջ, եթե լուծիչի պարունակությունը գերազանցում է լուծույթի զանգվածի 50%-ը:

5. Տվյալ խմբում «ներկող նյութ» եզրույթը չի վերաբերում այն արտադրանքին, որն օգտագործվում է որպես յուղաներկի լցանյութ՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այն պիտանի է սոսնձային ներկերի համար, թե ոչ:

6. 3212 ապրանքային դիրքում նշված «դրոշմատպման համար նախատեսված փայլաթիթեղ» եզրույթը վերաբերում է միայն բարակ թերթավոր նյութերին, որոնք օգտագործվում են դրոշմներ դնելու համար, օրինակ՝ գրքերի կազմերի կամ գլխարկների ժապավենների վրա, եւ բաղկացած են՝

   ա) մետաղական փոշուց (ներառյալ թանկարժեք մետաղի փոշին) կամ գունանյութից՝ ագլոմերացված սոսնձով, դոնդողանյութով կամ կապակցող այլ նյութով.

   բ) մետաղից (ներառյալ թանկարժեք մետաղը) կամ գունանյութից, որով պատված է ցանկացած նյութից պատրաստված թերթավոր տակդիր:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3201	Բուսական ծագմամբ դաբաղային լուծամզուքներ, տանիններ եւ դրանց աղերը, եթերները՝ պարզ եւ բարդ եւ այլ ածանցյալներ՝	
3201 10 000 0	– կվեբրախոյի լուծամզուք	–
3201 20 000 0	– ակացիայի լուծամզուք	–
320190	– այլ՝	
3201 90 200 0	– – սումախի լուծամզուք, խոշոր թեփուկներով կաղնու լուծամզուք, կաղնու լուծամզուք կամ շագանակի լուծամզուք	–
3201 90 900 0	– – այլ	–
3202	Դաբաղային օրգանական նյութեր՝ սինթետիկ, դաբաղային անօրգանական նյութեր, դաբաղման պատրաստուկներ, դաբաղման բնական նյութեր պարունակող կամ չպարունակող, ֆերմենտային պատրաստուկներ՝ նախնական դաբաղման համար՝	
3202 10 000 0	– Դաբաղային օրգանական նյութեր՝ սինթետիկ	–
3202 90 000 0	– այլ	–
3203 00	Բուսական կամ կենդանական ծագում ունեցող ներկող նյութեր (ներառյալ ներկող լուծամզուքները՝ բացի կենդանական ածուխից)՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված բուսական կամ կենդանական ծագում ունեցող ներկող նյութերի հիմքով պատրաստված պատրաստուկներ՝	
3203 00 100	– բուսական ծագում ունեցող ներկող նյութեր եւ դրանց հիմքով պատրաստուկներ՝	
3203 00 100 1	– – սեւ կատեխու *(Acacia catechu)*	–
3203 00 100 9	– – այլ	–
3203 00 900 0	– –կենդանական ծագում ունեցող ներկող նյութեր եւ դրանց հիմքով պատրաստուկներ	–
3204	Օրգանական սինթետիկ ներկող նյութեր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, պատրաստուկներ՝ պատրաստված տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված օրգանական սինթետիկ ներկող նյութերի հիմքով, օրգանական սինթետիկ արտադրանք, որն օգտագործվում է որպես օպտիկական սպիտակեցնող նյութ կամ լյումինաֆոր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության՝	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
	– տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված օրգանական սինթետիկ ներկող նյութեր եւ դրանց հիմքով պատրաստված պատրաստուկներ՝	
3204 11 000 0	– – դիսպերս ներկանյութեր եւ դրանց հիմքով պատրաստուկներ	–
3204 12 000 0	– – թթվային ներկանյութեր՝ նախապես մետաղապատված կամ չմետաղապատված եւ դրանց հիմքով պատրաստուկներ, ներկեր եւ դրանց հիմքով պատրաստուկներ	–
3204 13 000 0	– – հիմնական ներկանյութեր եւ դրանց հիմքով պատրաստուկներ	–
3204 14 000 0	– – ուղղակի ներկանյութեր եւ դրանց հիմքով պատրաստուկներ	–
3204 15 000 0	– – մուգ կապույտ գույնի ներկանյութեր (այդ թվում՝ որպես գունանյութեր օգտագործվող) եւ դրանց հիմքով պատրաստուկներ	–
3204 16 000 0	– – քիմիապես ակտիվ ներկանյութեր եւ դրանց հիմքով պատրաստուկներ	–
3204 17 000 0	– – գունանյութեր եւ դրանց հիմքով պատրաստուկներ	–
3204 19 000 0	– – այլ՝ ներառյալ 3204 11-3204 19 ենթադիրքերում նշված երկու կամ ավելի ներկող նյութերի խառնուրդները	–
3204 20 000 0	– օրգանական սինթետիկ արտադրանք՝ օգտագործվող որպես օպտիկական սպիտակեցնող նյութ	–
3204 90 000 0	– այլ	–
3205 00 000 0	Գունավոր լաքեր, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված գունավոր լաքերի հիմքով պատրաստուկներ	–
3206	Ներկող այլ նյութեր, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված եւ 3203, 3204 կամ 3205 ապրանքային դիրքերում ընդգրկված պատրաստուկներից տարբեր պատրաստուկներ, որպես լյումինաֆոր օգտագործվող անօրգանական արտադրանք՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության՝	
	– գունանյութեր եւ պատրաստուկներ՝ տիտանի երկօքսիդի հիմքով՝	
3206 11 000 0	– – չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվ.% կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող	–
3206 19 000 0	– – այլ	–

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3206 20 000 0	– գունանյութեր եւ պատրաստուկներ՝ քրոմի միացությունների հիմքով	–
	– ներկող այլ նյութեր եւ պատրաստուկներ՝	
3206 41 000 0	– – ուլտրամարին եւ դրա հիմքով պատրաստուկներ	–
3206 42 000 0	– – բարիտասպիտակ եւ ցինկի սուլֆիդի հիմքով այլ գունանյութեր ու պատրաստուկներ	–
3206 49	– – այլ՝	
3206 49 100 0	– – – մագնետիտ	–
3206 49 300 0	– – – գունանյութեր եւ պատրաստուկներ՝ կադմիումի միացությունների հիմքով	–
3206 49 800 0	– – – այլ	–
3206 50 000 0	– անօրգանական արտադրանք՝ օգտագործվող որպես լյումինաֆոր	–
3207	Պատրաստի գունանյութեր, ապակու պատրաստի պղտորիչներ եւ պատրաստի ներկեր, ապակենման արծնններ եւ ջնարակներ, անգոբներ (լուծախմորներ), հեղուկ փայլանյութերի եւ համանման պատրաստուկներ՝ խեցեղենի (կերամիկայի), արծնների կամ ապակու արտադրության ժամանակ օգտագործվող, ապակենման բովախառնուրդ եւ այլ տեսակի ապակի՝ փոշու, հատիկների կամ փաթիլների տեսքով՝	
3207 10 000 0	– պատրաստի գունանյութեր, ապակու պատրաստի պղտորիչներ եւ պատրաստի ներկեր եւ համանման պատրաստուկներ	–
3207 20	– ապակենման արծնններ եւ ջնարակներ, անգոբներ (լուծախմորներ) եւ համանման պատրաստուկներ՝	
3207 20 100 0	– – անգոբներ (լուծախմորներ)	–
3207 20 900 0	– – այլ	–
3207 30 000 0	– հեղուկ փայլանյութերի եւ համանման պատրաստուկներ	–
3207 40	– ապակենման բովախառնուրդ եւ այլ տեսակի ապակի՝ փոշու, հատիկների կամ փաթիլների տեսքով՝	
3207 40 400 0	– – ապակի՝ փաթիլների տեսքով, 0,1 մմ կամ ավելի երկարությամբ, բայց 3,5 մմ-ից ոչ ավելի, եւ 2 մկմ կամ ավելի հաստությամբ, բայց 5 մկմ-ից ոչ ավելի, ապակի՝ փոշու կամ հատիկների տեսքով, 99 զանգվ.% կամ ավելի սիլիցիումի երկօքսիդ պարունակող	–
3207 40 850	– – այլ՝	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3207 40 850 1	– – – ապակենման բովախառնուրդ՝ փաթիլների տեսքով	–
3207 40 850 9	– – – այլ	–
3208	Ներկեր եւ լաքեր (ներառյալ արծնները եւ ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված, տվյալ խմբի 4-րդ ծանոթագրության մեջ նշված լուծույթներ՝	
3208 10	– բարդ պոլիեթերների հիմքով՝	
3208 10 100 0	– – տվյալ խմբի 4-րդ ծանոթագրության մեջ նշված լուծույթներ	–
3208 10 900 0	– – այլ	–
3208 20	– ակրիլային կամ վինիլային պոլիմերների հիմքով՝	
3208 20 100 0	– – տվյալ խմբի 4-րդ ծանոթագրության մեջ նշված լուծույթներ	–
3208 20 900	– – այլ՝	
3208 20 900 1	– – – 8701–8705 ապրանքային դիրքերում ընդգրկված՝ շարժիչով տրանսպորտային միջոցների, դրանց հանգույցների եւ ագրեգատների արդյունաբերական հավաքման համար[5)]	–
3208 20 900 9	– – – այլ	–
3208 90	– այլ՝	
	– – տվյալ խմբի 4-րդ ծանոթագրության մեջ նշված լուծույթներ՝	
3208 90 110 0	– – – 2,2'-(տրետ-բութիլիմինո) դիէթանոլի եւ 4,4'-մեթիլենդիցիկլոհեքսիլդիիզոցիանատի պոլիուրեթան՝ լուծույթի տեսքով՝ 48 զանգվ.% կամ ավելի պոլիմերի պարունակությամբ N,N-դիմեթիլացետամիդում	–
3208 90 130 0	– – – *n*-կրեզոլի եւ դիվինիլբենզոլի համապոլիմեր՝ լուծույթի տեսքով՝ 48 զանգվ.% կամ ավելի պոլիմերի պարունակությամբ N,N-դիմեթիլացետամիդում	–
3208 90 190	– – – այլ՝	
3208 90 190 1	– – – – 8701–8705 ապրանքային դիրքերում ընդգրկված՝ շարժիչով տրանսպորտային միջոցների, դրանց հանգույցների եւ ագրեգատների արդյունաբերական հավաքման համար[5)]	–
3208 90 190 9	– – – – այլ	–
	– – այլ՝	

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3208 90 910	– – – սինթետիկ պոլիմերների հիմքով՝	
3208 90 910 1	– – – – 8701–8705 ապրանքային դիրքերում ընդգրկված՝ շարժիչով տրանսպորտային միջոցների, դրանց հանգույցների եւ ագրեգատների արդյունաբերական հավաքման համար[5)]	–
3208 90 910 9	– – – – այլ	–
3208 90 990 0	– – – քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով	–
3209	Ներկեր եւ լաքեր (ներառյալ արծնները եւ ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված՝	
3209 10 000	– ակրիլային կամ վինիլային պոլիմերների հիմքով՝	
3209 10 000 1	– – 8701–8705 ապրանքային դիրքերում ընդգրկված՝ շարժիչով տրանսպորտային միջոցների, դրանց հանգույցների եւ ագրեգատների արդյունաբերական հավաքման համար[5)]	–
3209 10 000 9	– – այլ	–
3209 90 000 0	– այլ	–
3210 00	Այլ ներկեր եւ լաքեր (ներառյալ՝ արծնները, ողորկալաքերը եւ սոսնձային ներկերը), պատրաստի ջրային գունանյութեր՝ կաշվի մշակման համար օգտագործվող	
3210 00 100 0	– յուղաներկեր եւ լաքեր (ներառյալ արծնները եւ ողորկալաքերը)	–
3210 00 900 0	– այլ	–
3211 00 000 0	Պատրաստի չորարարներ	–
3212	Գունանյութեր (ներառյալ մետաղական փոշիներ եւ փաթիլներ)՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված, հեղուկ կամ մածուկանման, որոնք օգտագործվում են ներկերի արտադրության մեջ (ներառյալ արծնները), փայլաթիթեղ դրոշմատպման համար, ներկանյութեր եւ ներկող այլ նյութեր՝ բաժնեծրարված ձեւով կամ փաթեթավորումով մանրածախ վաճառքի համար՝	
3212 10 000 0	– փայլաթիթեղ դրոշմատպման համար	–
3212 90 000 0	– այլ	–

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3213	Գեղարվեստական ներկեր՝ նկարիչների, ուսանողների կողմից կամ ցուցանակների ձեւավորման համար օգտագործվող, գունաթափանցման համար օգտագործվող ներկեր, ներկեր ժամանցի համար եւ համանման արտադրանք՝ հաբերի, պատիճների տեսքով, սրվակներով, տուփերով կամ համանման տեսքով կամ փաթեթավորումով՝	
3213 10 000 0	– ներկերի հավաքածու	–
3213 90 000 0	– այլ	–
3214	Ապակու եւ այգեգործական ծեփամածիկներ, ձյութացեմենտներ, բաղադրություններ խտման համար եւ այլ մաստիկաներ, մածիկներ ներկարարական աշխատանքների համար, ոչ հրակայուն բաղադրություններ շենքերի ճակատները, ներքին պատերը, հատակները, առաստաղները կամ մյուս մասերը նախապատրաստելու համար՝	
3214 10	– ապակու եւ այգեգործական ծեփամածիկներ, ձյութացեմենտներ, բաղադրություններ խտման համար եւ այլ մաստիկաներ, մածիկներ ներկարարական աշխատանքների համար՝	
3214 10 100	– ապակու եւ այգեգործական ծեփամածիկներ, ձյութացեմենտներ, բաղադրություններ խտման համար եւ այլ մաստիկաներ՝	
3214 90 100 1	– – – մոնտաժային պոլիուրեթանային փրփուր՝ աերոզոլային գլանանոթներով	–
3214 10 100 9	– – – այլ	–
3214 10 900 0	– – մածիկներ ներկարարական աշխատանքների համար	–
3214 90 000	– այլ՝	
3214 90 000 1	– – ավիացիոն շարժիչների արտադրության համար[5)]	–
3214 90 000 9	– – այլ	–
3215	Տպագրական ներկ, գրելու կամ նկարելու թանաք կամ տուշ եւ թանաքի այլ տեսակներ՝ խտացրած կամ չխտացրած, պինդ կամ ոչ պինդ՝	
	– տպագրական ներկ՝	
3215 11 000 0	– – սեւ	–
3215 19 000 0	– – այլ	–
3215 90 000 0	– այլ	–

ԽՈՒՄԲ **33**

ԵԹԵՐԱՅՈՒՂԵՐ ԵՎ ՌԵՏԻՆԱՆՅՈՒԹԵՐ. ՕԾԱՆԵԼԻՔԱՅԻՆ, ԿՈՍՄԵՏԻԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՐԴԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ծանոթագրություններ.

1. Տվյալ խմբում չեն ընդգրկվում՝

   ա) 1301 կամ 1302 ապրանքային դիրքում նշված բնական բեւեկնախեժահյութը կամ բուսական լուծամզուքը.

   բ) 3401 ապրանքային դիրքում նշված օճառը կամ այլ արտադրանք, կամ

   գ) 3805 ապրանքային դիրքում նշված բեւեկնի, փայտանյութի կամ սուլֆատային բեւեկնայուղը կամ այլ արտադրանք:

2. 3302 ապրանքային դիրքում կիրառվող «բուրավետ նյութեր» եզրույթը վերաբերում է միայն 3301 ապրանքային դիրքում նշված նյութերին, նշված նյութերից ստացված հոտավետ բաղադրամասերին կամ սինթետիկ հոտավետ նյութերին:

3. 3303 - 3307 ապրանքային դիրքերում ընդգրկվում են, մասնավորապես, խառնուրդված կամ չխառնուրդված նյութերը (բացի եթերայուղերի ջրային թորվածքներց եւ եթերայուղերի ջրային լուծույթներից), որոնք պիտանի են նշված ապրանքային դիրքերում որպես ապրանքներ օգտագործվելու համար եւ չափածրարված են մանրածախ վաճառքի համար՝ նման նպատակների համար կիրառվող եղանակով:

4. 3307 ապրանքային դիրքում նշված «օծանելիքային, կոսմետիկական կամ հարդարման միջոցներ» եզրույթն ընդգրկում է, մասնավորապես, հետեւյալ արտադրատեսակները՝ կապոցներ՝ հոտավետ նյութերով, անուշահոտություններ, որոնք այրվելիս հոտ են արձակում, բուրավետ թղթեր եւ թուղթ՝ ներծծված կամ ծածկված կոսմետիկական միջոցներով, լուծույթներ՝ կոնտակտային լինզաները կամ աչքի պրոթեզները պահելու համար,

բամբակը, թաղիքը կամ նրբաթաղիքը եւ չգործված կտորեղենը՝ ներծծված, ծածկված օծանելիքային կամ կոսմետիկական միջոցներով, հարդարման միջոցները կենդանիների համար:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
3301	Եթերայուղեր (տերպեններ պարունակող կամ չպարունակող)՝ ներառյալ լուծամզված եւ բացարձակ եթերայուղերը, ռետինանյութերը, լուծամզված եթերայուղերը, եթերայուղերի խտանյութերը՝ ճարպերի, չցնդող յուղերի, մոմերի կամ համանման նյութերի մեջ, որոնք ստացվում են անֆլերաժի կամ թթվամշակման մեթոդով, եթերայուղերի տերպենազերծումից ստացված տերպենային կողմնակի արգասիքներ, եթերայուղերի ջրային թորվածքներ եւ եթերայուղերի ջրային լուծույթներ.	
	– ցիտրուսային պտուղների եթերայուղեր.	
3301 12	– – նարնջի.	
3301 12 100 0	– – – տերպեններ պարունակող	–
3301 12 900 0	– – – տերպեններ չպարունակող	–
3301 13	– – կիտրոնի.	
3301 13 100 0	– – – տերպեններ պարունակող	–
3301 13 900 0	– – – տերպեններ չպարունակող	–
3301 19	– – այլ՝	
3301 19 200 0	– – – տերպեններ պարունակող	–
3301 19 800 0	– – – տերպեններ չպարունակող	–
	– եթերայուղեր, բացառությամբ ցիտրուսային պտուղների եթերայուղերի.	
3301 24	– – պղպեղային անանուխի *(Mentha piperita)*.	
3301 24 100 0	– – – տերպեններ պարունակող	–
3301 24 900 0	– – – տերպեններ չպարունակող	–
3301 25	– – անանուխի այլ տեսակների.	
3301 25 100 0	– – – տերպեններ պարունակող	–
3301 25 900 0	– – – տերպեններ չպարունակող	–
3301 29	– – այլ՝	
	– – – մեխակի, ներոլիի եւ իլանգ-իլանգի.	
3301 29 110 0	– – – տերպեններ չպարունակող	–
3301 29 310 0	– – – տերպեններ չպարունակող	–
	– – – այլ՝	
3301 29 410 0	– – – – տերպեններ չպարունակող	–

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
	– – – – տերպենններ չպարունակող՝	
3301 29 710 0	– – – – – խորդենու, հասմիկի, վետիվերիայի	–
3301 29 790 0	– – – – – նարդոսի կամ նարդոսինի	–
3301 29 910 0	– – – – – այլ	–
3301 30 000 0	– ռետինանյութեր	–
3301 90	– այլ՝	
3301 90 100 0	– – եթերայուղերի տերպենազերծումից ստացված տերպենային կողմնակի արգասիքներ	–
	– – լուծամզված եթերայուղեր.	
3301 90 210 0	– – – մատուտակից եւ գայլուկից	–
3301 90 300 0	– – – այլ	–
3301 90 900 0	– – այլ	–
3302	Բուրավետ նյութերի խառնուրդներ եւ խառնուրդներ (ներառյալ սպիրտային լուծույթները)՝ ստացված մեկ կամ ավելի այդպիսի նյութերի հիման վրա, որոնք օգտագործվում են որպես արդյունաբերական հումք, այլ պատրաստուկներ բուրավետ նյութերի հիմքով, որոնք օգտագործվում են ըմպելիքների արտադրության համար.	
3302 10	– սննդամթերքի կամ ըմպելիքների արդյունաբերական արտադրության համար օգտագործվող.	
	– – ըմպելիքների արդյունաբերական արտադրության համար օգտագործվող.	
	– – – պատրաստուկներ, որոնք պարունակում են ըմպելիքները բնութագրող համ եւ հոտ հաղորդող բոլոր բաղադրիչները.	
3302 10 100 0	– – – – 0,5 ծավ.%-ից ավելի սպիրտի պարունակությամբ	–
	– – – – այլ՝	
3302 10 210 0	– – – – – կաթնային ճարպեր, բուսաշաքարներ, իզոգլյուկոզաներ, գլյուկոզաներ կամ օսլա չպարունակող կամ 1,5 զանգ.%-ից պակաս կաթնային ճարպ, 5 զանգ.% բուսաշաքարներ կամ իզոգլյուկոզաներ, 5 զանգ.% գլյուկոզաներ կամ օսլա պարունակող	–
3302 10 290 0	– – – – – այլ	–
3302 10 400 0	– – – այլ	–
3302 10 900 0	– – սննդամթերքի արդյունաբերական արտադրության համար օգտագործվող.	–
3302 90	– այլ՝	
3302 90 100 0	– – սպիրտային լուծույթներ	–
3302 90 900 0	– – այլ	–

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
3303 00	Օծանելիք, հարդաջուր՝	
3303 00 100 0	– օծանելիք	–
3303 00 900 0	– հարդաջուր	–
3304	Կոսմետիկական կամ դիմահարդարման եւ մաշկի խնամքի միջոցներ (բացի դեղամիջոցներից)՝ ներառյալ միջոցները՝ արեւաթխության դեմ կամ արեւաթխության համար, մանիկյուրի եւ պեդիկյուրի միջոցներ.	
3304 10 000 0	– շրթունքների շպարման միջոցներ	–
3304 20 000 0	– աչքերի շպարման միջոցներ	–
3304 30 000 0	– մանիկյուրի եւ պեդիկյուրի միջոցներ	–
	– այլ՝	
3304 91 000 0	– – դիմափոշի՝ ներառյալ կոմպակտ դիմափոշին	–
3304 99 000 0	– – այլ	–
3305	մազերի խնամքի միջոցներ՝	
3305 10 000 0	– շամպուններ	–
3305 20 000 0	– մազերի մշտական գանգրեցման կամ ուղղման համար նախատեսված միջոցներ	–
3305 30 000 0	– մազերի լաք	–
3305 90 000	– այլ՝	
3305 90 000 1	– – մազերի լոյոններ	–
3305 90 000 9	– – այլ	–
3306	Բերանի խոռոչի եւ ատամների հիգիենայի միջոցներ՝ ներառյալ ատամնապրոթեզների ֆիքսման փոշիներն ու մածուկները. միջատամային տարածքները մաքրելու թելեր (ատամները մաքրելու մետաքսաթել), անհատական փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար.	
3306 10 000 0	– ատամները մաքրելու միջոցներ	–
3306 20 000 0	– միջատամնային տարածքները մաքրելու թելեր (ատամները մաքրելու մետաքսաթել)	–
3306 90 000 0	– այլ	–

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
3307	Միջոցներ՝ սափրվելուց առաջ, սափրվելու ընթացքում կամ դրանից հետո օգտագործելու համար, անհատական օգտագործման հոտազերծիչներ, բաղադրություններ՝ լոգանք ընդունելու համար, մազահեռացման միջոցներ եւ օծանելիքային, կոսմետիկական ու հարդարման այլ միջոցներ՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված. հոտազերծիչներ՝ նախատեսված շենքերում օգտագործելու համար՝ բուրավետացված կամ ոչ բուրավետացված, ախտահանիչ հատկություններով օժտված կամ առանց դրանց.	
3307 10 000 0	– միջոցներ՝ սափրվելուց առաջ, սափրվելու ընթացքում կամ դրանից հետո օգտագործելու համար	–
3307 20 000 0	– անհատական օգտագործման հոտազերծիչներ եւ հակաքրտինքային միջոցներ	–
3307 30 000 0	– բուրավետացված աղեր եւ լոգանք ընդունելու համար այլ բաղադրություններ	–
	– միջոցներ՝ շինությունների օդը բուրավետ դարձնելու կամ հոտազերծելու համար՝ ներառյալ կրոնական ծեսերի ժամանակ օգտագործվող անուշահոտությունների.	
3307 41 000 0	– – «ագարբատտի» եւ այլ անուշահոտություններ, որոնք այրվելիս հոտ են արձակում	–
3307 49 000 0	– – այլ	–
3307 90 000	– այլ՝	
3307 90 000 1	– – լուծույթներ՝ կոնտակտային լինզաները կամ աչքի պրոթեզները պահելու համար	–
3307 90 000 2	– – կոնտակտային լինզաների կաթիլներ	–
3307 90 000 8	– – այլ	–

ԽՈՒՄԲ **34**

ՕՃԱՌ, ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱԱԿՏԻՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԼՎԱՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ, ՔՍԱՆՅՈՒԹԵՐ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ՄՈՄԵՐ, ՄԱՔՐՄԱՆ ԿԱՄ ՓԱՅԼԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄՈՄԵՐ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ, ԾԵՓՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱԾՈՒԿՆԵՐ, ՊԼԱՍՏԻԼԻՆ, «ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄՈՄ» ԵՎ ԳԻՊՍԻ ՀԻՄՔՈՎ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություններ.

1. Տվյալ խմբում չեն ընդգրկվում՝

ա) սննդում օգտագործման համար պիտանի խառնուրդները կամ պատրաստի մթերքները, որոնք ստացվում են կաղապարները յուղելու համար օգտագործվող բուսական կամ կենդանական ճարպերից կամ յուղերից (ապրանքային դիրք 1517).

բ) քիմիական կոնկրետ բաղադրությամբ առանձին միացությունները.

գ) շամպունները, ատամները մաքրելու միջոցները, սափրվելու համար քսուքները եւ փրփուրները կամ լոգանք ընդունելու համար բաղադրությունները, որոնք օճառ կամ օրգանական այլ մակերեւութաակտիվ նյութեր են պարունակում (ապրանքային դիրքեր 3305, 3306 կամ 3307):

2. 3401 ապրանքային դիրքում կիրառվող «օճառ» եզրույթը վերաբերում է միայն ջրում լուծվող օճառին: 3401 ապրանքային դիրքում նշված օճառը եւ մյուս արտադրատեսակները կարող են ունենալ հավելանյութեր (օրինակ՝ ախտահանիչ միջոցներ, հղկափոշիներ, լցանյութեր կամ դեղամիջոցներ): Հղկափոշիներ պարունակող արտադրատեսակներն ընդգրկվում են 3401 ապրանքային դիրքում միայն քառակող ձեւ ունեցող, կտորով կամ ձեւավոր արտադրատեսակների տեսքով: Նշված արտադրատեսակներն այլ ձեւերով ընդգրկվում են 3405 ապրանքային դիրքում՝ որպես «մաքրող փոշիներ եւ համանման միջոցներ»:

3. 3402 ապրանքային դիրքում կիրառվող «մակերեւութաակտիվ օրգանական նյութեր» եզրույթը վերաբերում է այն արտադրատեսակներին, որոնք ջրի հետ խառնելիս 0,5% խտության ու 20ºC ջերմաստիճանի պայմաններում եւ նույն ջերմաստիճանում մեկ ժամ պահելուց հետո.

   ա) տալիս են թափանցիկ կամ կիսաթափանցիկ հեղուկ կամ կայուն էմուլսիա՝ առանց չլուծվող նյութերի նստվածքագոյացման, եւ

   բ) նվազեցնում են ջրի մակերեւութային լարվածությունը մինչեւ 4,5 x 10-2 Ն/մ (45 դին/սմ) կամ պակաս:

4. 3403 ապրանքային դիրքում կիրառվող «բիտումային տեսակի հանքանյութերից ստացված նավթ կամ նավթամթերքներ» եզրույթը վերաբերում է 27-րդ խմբի 2-րդ ծանոթագրության մեջ նշված արտադրատեսակներին:

5. 3404 ապրանքային դիրքում կիրառվող «արհեստական եւ պատրաստի մոմեր» եզրույթը, հաշվի առնելով ստորեւ նշված բացառությունները, վերաբերում է միայն՝

   ա) մոմանման օրգանական նյութերին, որոնք ստացվում են քիմիական եղանակով եւ ջրում լուծվում կամ չեն լուծվում.

   բ) տարբեր տեսակի մոմերի խառնումից ստացված նյութերին.

գ) մեկ կամ մի քանի տեսակի՝ ճարպերի, խեժերի, հանքային նյութերի կամ այլ նյութերի պարունակությամբ մոմերի հիմքով մոմանման նյութերին:

Տվյալ խմբում չեն ընդգրկվում՝

ա) 1516, 3402 կամ 3823 ապրանքային դիրքերում նշված նյութերը, եթե նույնիսկ նրանք մոմանման չեն.

բ) 1521 ապրանքային դիրքում նշված կենդանական կամ բուսական ծագում ունեցող չխառնուրդված մոմերը, որոնք զտված կամ զտված չեն, ներկված կամ ներկված չեն.

գ) 2712 ապրանքային դիրքում նշված հանքային մոմերը կամ համանման արտադրատեսակները, որոնք խառնուրդված կամ խառնուրդված չեն կամ ուղղակի ներկված կամ ներկված չեն կամ

դ) հեղուկ միջավայրի հետ խառնուրդված մոմերը, որոնք դիսպերսված կամլուծված են ջրային միջավայրում (3405, 3809 եւ այլ ապրանքային դիրքեր):

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
3401	Օճառ, օճառ պարունակող կամ չպարունակող, քառակող ձեւ ունեցող, կտորով կամ ձեւավոր արտադրատեսակների տեսքով մակերեւութաակտիվ օրգանական նյութեր եւ միջոցներ, որոնք որպես օճառ են օգտագործվում, օճառ պարունակող կամ չպարունակող մակերեւութաակտիվ օրգանական նյութեր եւ միջոցներ՝ մաշկը մաքրելու համար հեղուկի կամ կրեմի տեսքով, բաժնեծրարված մանրածախ վաճառքի համար, թուղթ, բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք եւ չգործված կտորեղեն՝ օճառով կամ լվացող միջոցով ներծծված կամ ծածկված.	

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
	- օճառ եւ մակերեւութաակտիվ օրգանական նյութեր ու միջոցներ՝ քառակող ձեւ ունեցող, կտորով կամ ձեւավոր արտադրատեսակների տեսքով, թուղթ, բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք եւ չգործված կտորեղեն՝ օճառով կամ լվացող միջոցով ներծծված կամ ծածկված.	
3401 11 000	– – հարդարման (ներառյալ դեղամիջոցներ պարունակողները)	
3401 11 000 1	– – – ձեռքի օճառ (ներառյալ դեղամիջոցներ պարունակող օճառը)	–
3401 11 000 9	– – – այլ	–
3401 19 000 0	– – այլ	–
3401 20	– օճառ՝ այլ ձեւերով	
3401 20 100 0	– – փաթիլներ, վաֆլի, հատիկներ կամ փոշիներ	–
3401 20 900 0	– – այլ	–
3401 30 000 0	– օճառ պարունակող կամ չպարունակող մակերեւութաակտիվ օրգանական նյութեր եւ միջոցներ՝ մաշկը մաքրելու համար հեղուկի կամ կրեմի տեսքով, բաժնեծրարված մանրածախ վաճառքի համար.	–
3402	Մակերեւութաակտիվ օրգանական նյութեր (բացի օճառից), մակերեւութաակտիվ նյութեր, լվացող միջոցներ (ներառյալ օժանդակ լվացող միջոցները) եւ մաքրող միջոցներ՝ օճառ պարունակող կամ չպարունակող (բացի 3401 ապրանքային դիրքում նշված միջոցներից).	
	– մակերեւութաակտիվ օրգանական նյութեր՝ բաժնեծրարված կամ չբաժնեծրարված մանրածախ վաճառքի համար.	
3402 11	– – անիոնային	
3402 11 100 0	– – – 30 զանգվ. % կամ ավելի, բայց 50 զանգվ. %-ից ոչ ավելի ալկիլ[օքսիդի (բենզոլսուլֆոնատա)] երկնատրիումի պարունակությամբ ջրային լուծույթ.	–
3402 11 900 0	– – – այլ	–
3402 12 000 0	– – կատիոնային	–
3402 13 000 0	– – ոչ իոնածին	–
3402 19 000 0	– – այլ	–
3402 20	– միջոցներ՝ բաժնեծրարված մանրածախ վաճառքի համար.	
3402 20 200 0	– – մակերեւութաակտիվ նյութեր	–

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
3402 20 900 0	– – լվացող եւ մաքրող միջոցներ	–
3402 90	– այլ՝	
3402 90 100	– – մակերեւութաակտիվ նյութեր.	
3402 90 100 1	– – – 30 զանգվ. % կամ ավելի, բայց 60 զանգվ. %-ից ոչ ավելի ալկիլէթօքսիսուլֆատի եւ 5 զանգվ. % կամ ավելի, բայց 15 զանգվ. %-ից ոչ ավելի պարունակությամբ ջրային լուծույթ	–
3402 90 100 9	– – – այլ	–
3402 90 900 0	– – լվացող եւ մաքրող միջոցներ	–
3403	Քսանյութեր (ներառյալ յուղող եւ սառեցնող էմուլսիաները կտրող գործիքների համար, միջոցներ հեղույսների եւ մանեկների քանդումը հեշտացնելու համար, -ժանգը հեռացնելու միջոցները կամ քսանյութերի հիմքով հակաքայքայիչ նյութերը եւ պատրաստուկները՝ կաղապարներից արտադրանքի հանումը հեշտացնելու համար) եւ տեքստիլ նյութերի, կաշիների, մորթիների ու այլ նյութերի յուղային եւ ճարպային մշակման համար օգտագործվող միջոցներ՝ բացառությամբ այն միջոցների, որոնց հիմնական բաղադրիչը բիտումային տեսակի հանքանյութերից ստացված՝ 70 զանգվ.% կամ ավելի նավթն ու նավթամթերքներն են՝	
	– բիտումային տեսակի հանքանյութերից ստացված նավթ կամ նավթամթերքներ պարունակող միջոցների՝	
3403 11 000 0	– – միջոցներ տեքստիլ նյութերի, կաշիների, մորթիների եւ այլ նյութերի մշակման համար	–
3403 19	– – այլ՝	
3403 19 100 0	– – – միջոցներ, որոնք բիտումային տեսակի հանքանյութերից ստացված՝ 70 զանգվ.% կամ ավելի նավթը կամ նավթամթերքները պարունակում են ոչ որպես հիմնական բաղադրիչ	–
3403 19 900 0	– – – այլ	–
	– այլ՝	
3403 91 000 0	– – միջոցներ տեքստիլ նյութերի, կաշիների, մորթիների եւ այլ նյութերի մշակման համար	–
3403 99 000 0	– – այլ	–
3404	Արհեստական եւ պատրաստի մոմեր՝	
3404 20 000 0	– պոլիօքսիէթիլենից (պոլիէթիլենգլիկոլից)	–
3404 90 000	– այլ՝	
3404 90 000 1	– – պատրաստի մոմեր՝ ներառյալ կնքամոմը	–

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
	– – այլ՝	
3404 90 000 2	– – – ավիացիոն շարժիչների արտադրության համար[5)]	–
3404 90 000 9	– – – այլ	–
3405	Կոշիկի վաքսեր եւ քսուքներ, կահույքի, հատակի, ավտոմեքենաների թափքերի, ապակու եւ մետաղի փայլեցնող միջոցներ եւ մաստիկաներ, մաքրող մածուկներ եւ փոշիներ ու համանման միջոցներ (այդ թվում՝ թուղթ, բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք, չգործված կտորեղեն, ծակոտկեն պլաստմասսաներ կամ ծակոտկեն ռետին՝ նշված նյութերով ներծծված կամ պատված)՝ բացի 3404 ապրանքային դիրքում նշված մոմերից՝	
3405 10 000 0	– կոշիկի կամ կաշվի վաքսեր, քսուքներ եւ համանման միջոցներ	–
3405 20 000 0	– փայլեցնող միջոցներ, մաստիկաներ եւ համանման միջոցներ փայտե կահույքի, հատակի կամ փայտից այլ արտադրատեսակների խնամքի համար	–
3405 30 000 0	– փայլեցնող եւ համանման միջոցներ ավտոմեքենաների թափքերի համար՝ բացի մետաղների համար նախատեսված միջոցներից	–
3405 40 000 0	– մաքրող մածուկներ ու փոշիներ եւ այլ մաքրող միջոցներ	–
3405 90	– այլ՝	
3405 90 10	– – փայլեցնող միջոցներ՝ մետաղական մակերեսների համար՝	
3405 90 101 0	– – – մածուկ ալմաստի	–
3405 90 109 0	– – – այլ	–
3405 90 900 0	– – այլ	–
3406 00 000 0	Մոմեր, բարակ մոմեր եւ համանման արտադրատեսակներ	–
3407 00 000 0	Ծեփման համար մածուկներ՝ ներառյալ երեխաների կողմից ծեփման համար նախատեսված պլաստիլին, «ատամնաբուժական մոմ» կամ ատամների ծեփապատճենն ստանալու բաղադրություններ, բաժնեծրարված հավաքածուներում, փաթեթվածքներում մանրածախ վաճառքի համար կամ սալիկների, պայտերի, չորսուների կամ համանման ձեւերով, գիպսի (կալցինացված գիպսի կամ կալցիում սուլֆատի) հիմքով ատամնաբուժական նպատակների համար այլ բաղադրություններ	–

ԽՈՒՄԲ **35**

ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ, ՎԵՐԱՓՈԽՎԱԾ ՕՍԼԱՆԵՐ, ՍՈՍԻՆՁՆԵՐ, ՖԵՐՄԵՆՏՆԵՐ

Ծանոթագրություններ.

1. Տվյալ խմբում չեն ընդգրկվում՝

ա) խմորիչները (ապրանքային դիրք 2102).

բ) արյան բաղադրամասերը (բացառությամբ արյան շիճուկից անջատված, թերապեւտիկ կամ կանխարգելիչ նպատակներով օգտագործման համար չնախատեսված ալբումինի), դեղամիջոցները կամ 30-րդ խմբում ընդգրկված այլ արտադրատեսակներ.

գ) նախնական դաբաղման համար նախատեսված ֆերմենտային պատրաստուկները (ապրանքային դիրք 3202).

դ) թրջոցման եւ լվացման համար նախատեսված ֆերմենտային պատրաստուկները եւ 34-րդ խմբում ընդգրկված մյուս նյութերը.

ե) կարծրացած պրոտեիները (ապրանքային դիրք 3913) կամ

զ) պոլիգրաֆիական արդյունաբերության մեջ օգտագործման համար նախատեսված դոնդողանյութից ստացված նյութերը (խումբ 49):

2. 3505 ապրանքային դիրքում կիրառվող «դեքստրիններ» եզրույթը վերաբերում է օսլայի ճեղքման նյութերին, որոնք պարունակում են չոր նյութում խաղողաշաքարի տեսքով հանդիպող ռեդուկցիայի ենթարկող շաքար՝ մինչեւ 10 %-ի չափով:

10%-ից ավելի ռեդուկցիայի ենթարկող շաքարի պարունակությամբ նմանատիպ նյութերն ընդգրկվում են 1702 ապրանքային դիրքում:

Լրացուցիչ ծանոթագրություն՝

1. 3504 00 100 0 ստորաենթադիրքում ներառվում են չոր մթերքի վերահաշվարկով 85 զանգվ.%-ից ավելի սպիտակուց պարունակող խտացված կաթնային սպիտակուցները:

ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐ	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
3501	Կազեին, կազեինատներ եւ կազեինի այլ ածանցյալներ, կազեինային սոսինձներ.	
3501 10	– կազեին՝	
3501 10 100 0	– – տեքստիլային վերականգնված մանրաթելերի արտադրության համար	–
3501 10 500 0	– – արդյունաբերական նպատակների համար՝ բացառությամբ սննդամթերքի կամ անասնակերի արտադրության	–
3501 10 900 0	– – այլ	–
3501 90	– այլ՝	
3501 90 100 0	– – կազեինային սոսինձներ	–
3501 90 900 0	– – այլ	–
3502	Ալբումիններ (ներառյալ երկու կամ ավելի շիճուկային սպիտակուցների խտանյութերը, որոնք պարունակում են չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվ.%-ից ավելի շիճուկային սպիտակուցներ), ալբումինատներ եւ ալբումինի այլ ածանցյալներ.	
	– ձվի ալբումին՝	
3502 11	– –չորացված՝	
3502 11 100 0	– – – սննդում օգտագործման համար ոչ պիտանի կամ ոչ սննդային նպատակներով վերամշակման համար նախատեսված	–
3502 11 900 0	– – – այլ	–
3502 19	– – այլ՝	
3502 19 100 0	– – – սննդում օգտագործման համար ոչ պիտանի կամ ոչ սննդային նպատակներով վերամշակման համար նախատեսված	–
3502 19 900 0	– – – այլ	–
3502 20	– կաթնային ալբումին՝ ներառյալ երկու կամ ավելի շիճուկային սպիտակուցների խտանյութերը.	
3502 20 100 0	– – սննդում օգտագործման համար ոչ պիտանի կամ ոչ սննդային նպատակներով վերամշակման համար նախատեսված	–

ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐ	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
	– – այլ՝	
3502 20 910 0	– – – չորացված (օրինակ՝ շերտերով, թեփուկաձեւ, փաթիլներով, փոշու տեսքով)	–
3502 20 990 0	– – – այլ	–
3502 90	– այլ՝	
	– – ալբումիններ, բացառությամբ ձվի ալբումինի եւ կաթնային ալբումինի (կանթալբումինի),	
3502 90 200 0	– – – սննդում օգտագործման համար ոչ պիտանի կամ ոչ սննդային նպատակներով վերամշակման համար նախատեսված	–
3502 90 700 0	– – – այլ՝	–
3502 90 900 0	– – ալբումինատներ եւ ալբումինի այլ ածանցյալներ	–
3503 00	Դոնդողանյութ (այդ թվում՝ ուղղանկյուն (այդ թվում՝ քառակուսի) թերթերով, մակերեսային մշակմամբ կամ առանց մշակման, ներկած կամ չներկած) եւ դոնդողանյութի ածանցյալներ, ձկնասոսինձ, կենդանական ծագման այլ սոսինձներ, բացի 3501 ապրանքային դիրքում ընդգրկված կազեինի սոսնձից.	
3503 00 100	– դոնդողանյութ եւ դրա ածանցյալներ՝	
3503 00 100 1	– – դոնդողանյութ	–
3503 00 100 9	– – այլ	–
3503 00,800	– այլ՝	
3503 00 800 1	– – չոր ձկնասոսինձ	–
3503 00 800 2	– – հեղուկ ձկնասոսինձ	–
3503 00 800 9	– – այլ	–
3504 00	Պեպտոններ եւ դրանց ածանցյալներ, սպիտակուցային այլ նյութեր եւ դրանց ածանցյալներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված, քրոմապատված կամ չքրոմապատված կաշվի կամ հում կաշվի փոշի.	
3504 00 100 0	– տվյալ խմբի 1-ին լրացուցիչ ծանոթագրության մեջ նշված խտացված կաթնային սպիտակուցներ	–
3504 00 900 0	– այլ	–
3505	Դեքստրիններ եւ վերափոխված այլ օսլաներ (օրինակ՝ նախապես դոնդողացված կամ բարդ եթերի վերածված օսլաներ), օսլաների, դեքստրինների կամ վերափոխված այլ օսլաների հիմքով ստացված սոսինձներ.	
3505 10	– դեքստրիններ կամ վերափոխված այլ օսլաներ՝	
3505 10 100 0	– – դեքստրիններ	–

ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐ	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորները
	– վերափոխված այլ օսլաներ	
3505 10 500 0	– – – բարդ կամ պարզ եթերի վերածված օսլաներ	–
3505 10 900 0	– – – այլ	–
3505 20	– սոսինձներ՝	
3505 20 100 0	– – 25 զանգվ.%-ից պակաս օսլաներ կամ դեքստրիններ կամ այլ վերափոխված օսլաներ պարունակող	–
3505 20 300 0	– – 25 զանգվ.% կամ ավելի, բայց 55 զանգվ.%-ից պակաս օսլաներ կամ դեքստրիններ կամ վերափոխված այլ օսլաներ պարունակող	–
3505 20 500 0	– – 55 զանգվ.% կամ ավելի, բայց 80 զանգվ.%-ից պակաս օսլաներ կամ դեքստրիններ կամ վերափոխված այլ օսլաներ պարունակող	–
3505 20 900 0	– – 80 զանգվ.% կամ ավելի օսլաներ կամ դեքստրիններ կամ վերափոխված այլ օսլաներ պարունակող	–
3506	Պատրաստի սոսինձներ եւ այլ պատրաստի հարակցանյութեր՝ այլ տեղում չնշված եւ չներառված, որպես սոսինձներ կամ հարակցանյութեր օգտագործվելու համար պիտանի, մանրածախ վաճառքի համար որպես սոսինձներ կամ հարակցանյութեր բաժնեծրարված, 1 կգ-ից ոչ ավելի զտաքաշ ունեցող արտադրանք.	
3506 10 000 0	– որպես սոսինձներ կամ հարակցանյութեր օգտագործվող, մանրածախ վաճառքի համար բաժնեծրարված, 1 կգ-ից ոչ ավելի զտաքաշ ունեցող արտադրանք	–
	– այլ՝	
3506 91 000 0	– – 3901 – 3913 ապրանքային դիրքերում ընդգրկված պոլիմերների կամ կաուչուկի հիմքով պատրաստված հարակցանյութեր	–
3506 99 000 0	– – այլ	–
3507	ֆերմենտներ, ֆերմենտային պատրաստուկներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված.	
3507 10 000 0	– ռենին եւ դրա խտանյութերը,	–
3507 90	– այլ՝	
3507 90 300 0	– – լիպոպրոտեին լիպազա, Ասպերգիլ հիմնային պրոթեազա	–
3507 90 900 0	– – այլ	–

ԽՈՒՄԲ **36**

ՊԱՅԹՈՒՅԻԿ ՆՅՈՒԹԵՐ, ՀՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ, ԼՈՒՑԿԻՆԵՐ, ՀՐԱԿԻՐ ՀԱՄԱՀԱԼՎԱԾՔՆԵՐ, ՈՐՈՇ ԴՅՈՒՐԱՎԱՌ ՆՅՈՒԹԵՐ

Ծանոթագրություններ.

1. Տվյալ խմբում չեն ընդգրկվում որոշակի քիմիական բաղադրություն ունեցող առանձին միացությունները՝ բացառությամբ 2ա կամ 2բ ծանոթագրության մեջ նկարագրված միացությունների:

2. 3606 ապրանքային դիրքում կիրառվող «դյուրավառ նյութերից պատրաստված ապրանքներ» եզրույթը կիրառվում է միայն հետեւյալ նյութերի նկատմամբ.

   ա) մետալդեհիդ, հեքսամեթիլենտետրամին եւ համանման նյութեր, որոնք բաժնեծրարված են կաղապարներում (օրինակ՝ հաբեր, ձողիկներ կամ համանման կաղապարներ)՝ որպես վառելիք օգտագործվելու համար, սպիրտի հիմքով վառելանյութ եւ համանման պինդ կամ կիսապինդ պատրաստի վառելիք.

   բ) 300 սմ^3 ոչ ավելի տարողությամբ բեռնարկղերում պահվող հեղուկ կամ հեղուկացված գազակերպ վառելիք, որն օգտագործվում է ծխախոտի կամ համանման վառիչների լցավորման կամ կրկնակի լցավորման համար եւ

   գ) խեժային ջահեր, պատրույգներ եւ համանման ապրանքներ:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3601 00 000 0 3602 00 000 0 3603 00	Վառոդ Պատրաստի պայթուցիկ նյութեր՝ բացի վառոդից Կրակահաղորդ քուղեր, ճայթեցնող քուղեր, հարվածող կամ ճայթեցնող հրապատիճներ, բռնկիչներ, էլեկտրաճայթիչներ՝	– –

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3603 00 100	- կրակահաղորդ քուղեր, ճայթեցնող քուղեր՝	
3603 00 100 1	– – պլաստմասսայից փողակներ (ռադիոհաղորդափողեր), որոնց ներքին մակերեսույթը պատված է պայթուցիկ նյութով	մ
3603 00 100 9	– – այլ	մ
3603 00 900	– այլ՝	
3603 00 900 1	– – ճայթեցնող հրապատիճներ՝ ոչ էլեկտրական	հատ
3603 00 900 9	– – այլ	հատ
3604	Հրավառելիք, ազդանշանային, անձրեւային հրթիռներ, հակամառախուղային ազդանշաններ եւ հրատեխնիկական այլ ապրանքներ.	
3604 10 000 0	– հրավառելիք	հատ
3604 90 000 0	– այլ	հատ
3605 00 000 0	Լուցկիներ՝ բացի 3604 ապրանքային դիրքում ընդգրկված հրատեխնիկական ապրանքներից	–
3606	Ֆեռոցերիում եւ հրակիր այլ համահալվածքներ՝ ցանկացած տեսքով, տվյալ խմբի 2-րդ ծանոթագրության մեջ նշված՝ դյուրավառ նյութերից պատրաստված ապրանքներ.	
3606 10 000 0	– 300 սմ^3 ոչ ավելի տարողությամբ բեռնարկղերում պահվող հեղուկ կամ հեղուկացված գազակերպ վառելիք, որն օգտագործվում է ծխախոտի կամ համանման վառիչների լցավորման կամ կրկնակի լցավորման համար	–
3606 90	– այլ՝	
3606 90 100 0	– – ֆեռոցերիում եւ հրակիր այլ համահալվածքներ՝ ցանկացած տեսքով	–
3606 90 900 0	– – այլ	–

ԽՈՒՄԲ **37**

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԿԻՆՈԱՊՐԱՆՔՆԵՐ

Ծանոթագրություններ՝

1. Տվյալ խմբում չեն ընդգրկվում թափոնները եւ ջարդոնները:

2. Տվյալ խմբում «լուսանկարչական» եզրույթը վերաբերում է մի գործընթացի, որի օգնությամբ լուսազգայուն մակերեսի վրա լուսային ճառագայթների կամ այլ ճառագայթումների ազդեցության հետեւանքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանում են տեսանելի պատկերներ:

Լրացուցիչ ծանոթագրություններ՝

1. Երկու երիզի վրա (երիզներից մեկը պարունակում է միայն պատկերը, երկրորդը երիզը՝ ձայնը) նկարահանված ձայնային ֆիլմերի դեպքում յուրաքանչյուր երիզը պետք է ընդգրկվի համապատասխան ապրանքային դիրքում:

2. «Ժամանակագրական ֆիլմեր» եզրույթը (ստորաենթադիրք 3706 90 510 0) վերաբերում է 330 մետրից պակաս երկարությամբ կինոժապավեններին, եւ այդ ֆիլմերում արտացոլվում են ընթացիկ քաղաքական, մարզական, ռազմական, գիտական, գրական, բանահյուսական, տուրիստական, հասարակական եւ այլ իրադարձություններ:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3701	Լուսանկարչական թիթեղներ եւ հարթ ժապավեններ՝ զգայունացրած, չլուսակայած, ցանկացած նյութից՝ բացի թղթից, ստվարաթղթից կամ մանածագործական նյութերից, վայրկենական լուսանկարման համար հարթ ժապավեններ՝ զգայունացրած, չլուսակայած, փաթեթավորված կամ առանց փաթեթավորման՝	
3701 10 000 0	– ռենտգենյան	մ²

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3701 20 000 0	– վայրկենական լուսանկարման համար	հատ
3701 30 000 0	– այլ թիթեղներ եւ ժապավեններ՝ ցանկացած կողմի 255 մմ-ից ավելի երկարությամբ	մ²
	– այլ՝	
3701 91 000 0	– – գունավոր (բազմագույն) լուսանկարչության համար	–
3701 99 000 0	– – այլ	մ²
3702	Լուսանկարչական ժապավեն՝ գլանափաթեթով, զգայունացրած, չլուսակայած, ցանկացած նյութերից, բացի թղթից, ստվարաթղթից կամ մանածագործական նյութերից, ժապավեններ՝ գլանափաթեթով, վայրկենական լուսանկարման համար՝ զգայունացած, չլուսակայած՝	
3702 10 000 0	– ռենտգենյան	մ²
	– այլ ժապավեն՝ չծակոտած, 105 մմ-ից ոչ ավելի լայնությամբ՝	
3702 31	– – գունավոր (բազմագույն) լուսանկարչության համար՝	
3702 31 200 0	– – – 30 մ-ից ոչ ավելի երկարությամբ	հատ
	– – – 30 մ-ից ավելի երկարությամբ՝	
3702 31 910 0	– – – – նեգատիվ գունավոր ժապավեն՝ 75 մմ կամ ավելի լայնությամբ, սակայն 105 մմ-ից ոչ ավելի, եւ 100 մ կամ ավելի երկարությամբ վայրկենական լուսանկարչության համար նախատեսված ժապավենատուփերի արտադրության համար	հատ, մ
3702 31 980 0	– – – – այլ	հատ, մ
3702 32	– – այլ՝ արծաթի հալոգենիդից լուսազգայուն շերտով՝	
	– – – 35 մմ-ից ոչ ավելի լայնությամբ՝	
3702 32 100 0	– – – – միկրոժապավեն, ժապավեն՝ գեղարվեստական լուսանկարչության համար	մ²
3702 32 200 0	– – – – այլ	մ²
3702 32 850 0	– – – 35 մմ-ից ավելի լայնությամբ	մ²
3702 39 000 0	– – այլ	մ²
	– այլ ժապավեն՝ չծակոտած, 105 մմ-ից ավելի լայնությամբ՝	
3702 41 000 0	– – 610 մմ-ից ավելի լայնությամբ եւ 200 մ-ից ավելի երկարությամբ գունավոր (բազմագույն) լուսանկարչության համար	մ²
3702 42 000 0	– – 610 մմ-ից ավելի լայնությամբ եւ 200 մ-ից ավելի երկարությամբ՝ բացի գունավոր լուսանկարչության համար նախատեսված ժապավեններից	մ²

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3702 43 000 0	– – 610 մմ-ից ավելի լայնությամբ եւ 200 մ-ից ոչ ավելի երկարությամբ	մ²
3702 44 000 0	– – 105 մմ-ից ավելի, սակայն 610 մմ-ից ոչ ավելի լայնությամբ	մ²
	– ժապավեն գունավոր (բազմագույն) լուսանկարչության համար՝	
3702 52 000 0	– – – 16 մմ-ից ոչ ավելի լայնությամբ	հատ, մ
3702 53 000 0	– – 16 մմ-ից ավելի, սակայն 35 մմ-ից ոչ ավելի լայնությամբ եւ 30 մ-ից ոչ ավելի երկարությամբ՝ նախատեսված դիապոզիտիվների (թափանցապատկերների) համար	հատ, մ
3702 54 000 0	– – 16 մմ-ից ավելի, սակայն 35 մմ-ից ոչ ավելի լայնությամբ եւ 30 մ-ից ոչ ավելի երկարությամբ՝ բացի դիապոզիտիվների համար նախատեսված ժապավեններից	հատ, մ
3702 55 000 0	– – 16 մմ-ից ավելի, սակայն 35 մմ-ից ոչ ավելի լայնությամբ եւ 30 մ-ից ավելի երկարությամբ	մ
3702 56 000 0	– – 35 մմ-ից ավելի լայնությամբ	հատ, մ
	– այլ՝	
3702 96	– – 35 մմ-ից ոչ ավելի լայնությամբ եւ 30 մ-ից ոչ ավելի երկարությամբ	
3702 96 100 0	– – – միկրոժապավեն, ժապավեն գեղարվեստական լուսանկարչության համար	մ
3702 96 900 0	– – – այլ	հատ, մ
3702 97	– – 35 մմ-ից ոչ ավելի լայնությամբ եւ 30 մ-ից ավելի երկարությամբ	
3702 97 100 0	– – – միկրոժապավեն, ժապավեն գեղարվեստական լուսանկարչության համար	մ
3702 97 900 0	– – – այլ	հատ, մ
3702 98 000 0	– – – 35 մմ-ից ավելի լայնությամբ	մ
3703	Լուսանկարչական թուղթ, ստվարաթուղթ եւ մանածագործական նյութեր՝ զգայունացրած, չլուսակայած	
3703 10 000	– 610 մմ-ից ավելի լայնությամբ գլանափաթեթներով՝	
3703 10 000 1	– – 1000 մմ-ից ավելի լայնությամբ գլանափաթեթներով լուսանկարչական թուղթ	–
3703 10 000 9	– – այլ	–
3703 20 000 0	– այլ՝ գունավոր (բազմագույն) լուսանկարչության համար	–
3703 90 000 0	– այլ	–

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3704 00	Լուսանկարչական թիթեղներ, ժապավեն, թուղթ, ստվարաթուղթ եւ մանածագործական նյութեր՝ լուսակայած, բայց չերեւակած՝	
3704 00 100 0	– թիթեղ եւ ժապավեն	–
3704 00 900 0	– այլ	–
3705	Լուսանկարչական թիթեղներ եւ ժապավեն՝ լուսակայած եւ երեւակած՝ բացի կինոժապավենից՝	
3705 10 000 0	– օֆսեթային վերարտադրության համար	–
3705 90	– այլ՝	
3705 90 100 0	– – միկրոժապավեններ	–
3705 90 900 0	– – այլ	–
3706	Կինոժապավեն՝ լուսակայած եւ երեւակած, ձայնուղիով կամ առանց ձայնուղու կամ միայն ձայնուղի պարունակող՝	
3706 10	– 35 մմ կամ ավելի լայնությամբ՝	
3706 10 100 0	– – միայն ձայնուղի պարունակող	մ
	– – այլ՝	
3706 10 910 0	– – – նեգատիվ, միջակա պոզիտիվ	մ
3706 10 990 0	– – – այլ պոզիտիվ՝	մ
3706 90	– այլ՝	
3706 90 100 0	– – միայն ձայնուղի պարունակող	մ
	– – այլ՝	
3706 90 310 0	– – – նեգատիվ, միջակա պոզիտիվ	մ
	– – – – այլ պոզիտիվ՝	
3706 90 510 0	– – – – ժամանակագրական ֆիլմեր	մ
	– – – – այլ՝ հետեւյալ լայնությամբ՝	
3706 90 910 0	– – – – – 10 մմ-ից պակաս	մ
3706 90 990 0	– – – – – 10 մմ կամ ավելի	մ
3707	Լուսաքիմիկատներ (բացի լաքերից, սոսինձներից, հարակցանյութերից եւ նույնանման պատրաստուկներից), չխառնուրդված արտադրանք՝ լուսանկարչական նպատակների համար օգտագործվող, որոշված բաժնեչափերով ներկայացված կամ մանրածախ վաճառքի նպատակով փաթեթավորված, օգտագործման համար պատրաստի վիճակում՝	
3707 10 000 0	– լուսազգայուն շերտեր՝ զգայունացրած	–
3707 90	– այլ՝	
3707 90 200 0	– – երեւակիչներ եւ սեւեռիչներ	–
3707 90 900 0	– – այլ	–

ԽՈՒՄԲ **38**

ԱՅԼ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Ծանոթագրություններ՝

1. Տվյալ խմբում չեն ընդգրկվում՝

ա) քիմիական որոշակի բաղադրությամբ առանձին տարրերը կամ միացությունները՝ բացառությամբ.

1) արհեստական գրաֆիտի (ապրանքային դիրք 3801),

2) ինսեկտիցիդների, ռոդենտիցիդների, ֆունգիցիդների, հերբիցիդների, հակածիլային միջոցների եւ բույսերի աճի կարգավորիչների, ախտահանող միջոցների ու նույնանման ապրանքների, որոնք բաժնեծրարված են՝ ըստ 3808 ապրանքային դիրքում նկարագրվածի,

3) բաղադրությունների, որոնք օգտագործվում են որպես կրակմարիչների լիցքեր կամ լիցքավորված նռնակներ՝ նախատեսված հրդեհաշիջման համար (ապրանքային դիրք 3813),

4) տվյալ խմբին վերաբերող 2-րդ ծանոթագրության մեջ նշված հավաստագրված չափանմուշային նյութերի,

5) տվյալ խմբին վերաբերող 3ա կամ 3գ ծանոթագրության մեջ նշված ապրանքների,

բ) քիմիական նյութերի խառնուրդները սննդամթերքի կամ սննդային արժեք ունեցող այլ նյութերի հետ, որոնք օգտագործվում են սննդամթերքի պատրաստման համար (որպես կանոն՝ ապրանքային դիրք 2106),

գ) խարամը, մոխիրը եւ մնացորդները (ներառյալ տիղմը՝ բացի կեղտաջրերի տիղմից), որոնք պարունակում են մետաղներ, մկնդեղ կամ դրանց խառնուրդներ, եւ որոնք համապատասխանում են 26-րդ խմբին վերաբերող 3ա կամ 3բ ծանոթագրության պահանջներին (ապրանքային դիրք 2620),

դ) դեղամիջոցները (ապրանքային դիրք 3003 կամ 3004), կամ

ե) օգտագործած կատալիզատորները, որոնք կիրառվում են ոչ թանկարժեք մետաղների կորզման կամ ոչ թանկարժեք մետաղների քիմիական միացությունների արտադրության նպատակով (ապրանքային դիրք 2620), օգտագործած կատալիզատորները, որոնք հիմնականում կիրառվում են թանկարժեք մետաղների կորզման նպատակով (ապրանքային դիրք 7112) կամ կատալիզատորներ, որոնք բաղկացած են մետաղներից կամ մետաղների համաձուլվածքներից, օրինակ՝ նուրբ մանրացման ենթարկված փոշու կամ կմախքային կատալիզատորի տեսքով (XIV կամ XV բաժին),

2Ա. 3822 ապրանքային դիրքում կիրառվող «հավաստագրված չափանմուշային նյութեր» եզրույթը նշանակում է չափանմուշային նյութեր, որոնց տրամադրված է հավաստագրված հատկությունների ցուցանիշները, այդ ցուցանիշների որոշման մեթոդները, յուրաքանչյուր ցուցանիշի հաշվարկման սխալանքը ներկայացնող հավաստագիր, եւ որոնք կիրառվում են վերլուծական, տրամաչափարկման եւ ստուգաչափման նպատակներով.

2Բ. Բացառությամբ 28-րդ կամ 29-րդ խմբում ընդգրկված ապրանքների՝ հավաստագրված չափանմուշային նյութերի դասակարգման դեպքում 3822 ապրանքային դիրքը անվանացանկի ցանկացած այլ ապրանքային դիրքի նկատմամբ ձեռք է բերում առավելություն:

3. 3824 ապրանքային դիրքում ընդգրկվում են հետեւյալ ապրանքները, որոնք չեն ընդգրկվում անվանացանկի որեւէ այլ ապրանքային դիրքում.

ա) մագնեզիումի օքսիդի կամ ալկալիական կամ հողալկալիական մետաղների հալոգենիդների՝ արհեստականորեն աճեցված բյուրեղները (բացի օպտիկական տարրերից). յուրաքանչյուր բյուրեղի զանգվածը՝ 2,5 գ-ից ոչ պակաս,

բ) սիվուխայի յուղը, ոսկրային ձյութի յուղը,

գ) թանաքի բծերը վերացնելու համար նախատեսված բաղադրությունները, որոնք բաժնեծրարված են մանրածախ վաճառքի համար,

դ) տպագրական տեքստերը ուղղելու համար նախատեսված բաղադրությունները, սրբագրական մյուս հեղուկները եւ սրբագրական ժապավենները (բացի 9612 ապրանքային դիրքում նշվածներից), որոնք բաժնեծրարված են մանրածախ վաճառքի համար, եւ

ե) կերամիկական հրատարրերը՝ հալուն (օրինակ՝ Զեգերի (հրաչափական) կոները):

4. Ամբողջ անվանացանկում «քաղաքային տնտեսության թափոններ» եզրույթը նշանակում է թափոններ, որոնք հավաքվում են տներից, հյուրանոցներից, ռեստորաններից, հիվանդանոցներից, խանութներից, գրասենյակներից եւ այլն, ճանապարհների եւ մայթերի աղբ, ինչպես նաեւ շինարարության եւ շենքերի քանդման հետեւանքով առաջացող թափոններ: Որպես կանոն՝ քաղաքային տնտեսության թափոնները պարունակում են տարատեսակ նյութեր, ինչպես օրինակ՝ պլաստմասսա, ռետին, փայտ, թուղթ, գործվածք, ապակի, մետաղներ, սննդամթերքի մնացորդներ, կոտրված կահույք եւ վնասված կամ անհարկավորության պատճառով դուրս գցված այլ առարկաներ: Մինչդեռ, «քաղաքային տնտեսության թափոններ» եզրույթը չի վերաբերում՝

ա) թափոններից, ինչպես օրինակ՝ պլաստմասսայի, ռետինի, փայտի, թղթի, գործվածքի, ապակու կամ մետաղների եւ օգտագործած մարտկոցների թափոններից ստացված առանձին նյութերին ու առարկաներին, որոնք ընդգրկվում են անվանացանկի համապատասխան ապրանքային դիրքերում,

բ) արտադրական թափոններին,

գ) ոչ պիտանի դեղագործական միջոցներին, որոնք ներկայացված են 30-րդ խմբին վերաբերող 4կ ծանոթագրության մեջ,

դ) տվյալ խմբին վերաբերող 6ա ծանոթագրության մեջ ներկայացված կլինիկական թափոններին:

5. 3825 ապրանքային դիրքում կիրառվող «կեղտաջրերի տիղմ» եզրույթը նշանակում է կեղտաջրերի վերամշակման քաղաքային ձեռնարկություններում գոյացող տիղմ եւ ներառում է նախնական մշակման թափոնները, լվացքաջրերը եւ չկայունացված տիղմը: Կայունացված տիղմը, եթե պիտանի է որպես պարարտանյութ օգտագործման համար, չի ընդգրկվում (խումբ 31):

6. 3825 ապրանքային դիրքում կիրառվող «այլ թափոններ» եզրույթը նշանակում է.

ա) կլինիկական թափոններ, այսինքն՝ բժշկության ոլորտում գիտական հետազոտության, ախտորոշիչ, բուժական կամ բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական այլ պրոցեդուրաների հետեւանքով գոյացող աղտոտված թափոններ, որոնք հաճախ պարունակում են ախտածիններ ու դեղագործական նյութեր, եւ որոնց համար պահանջվում են վնասազերծման հատուկ գործընթացներ (օրինակ՝ աղտոտված հագուստը, օգտագործված ձեռնոցներն ու ներարկիչները),

բ) բանեցված օրգանական լուծիչներ,

գ) մետաղների խածատման բանեցված լուծույթներ, հիդրավլիկ հեղուկներ, արգելակման հեղուկներ ու հակասառիչներ, եւ

դ) քիմիական կամ հարակից ճյուղերի արդյունաբերության այլ թափոններ,

Մինչդեռ, «այլ թափոններ» եզրույթը չի վերաբերում այն թափոններին, որոնք գերազանցապես պարունակում են բիտումային տեսակի հանքանյութերից ստացված նավթ եւ նավթամթերք (ապրանքային դիրք 2710):

7. 3826 ապրանքային դիրքում «բիոդիզել» եզրույթը նշանակում է որպես վառելիք օգտագործվող ճարպաթթուների մոնոալկիլային բարդ եթերներ, որոնք

ստացվում են կենդանական կամ բուսական մշակված կամ չմշակված ճարպերից եւ յուղերից:

Ենթադիրքերի վերաբերյալ ծանոթագրություններ՝

1. 3808 50 ենթադիրքում ընդգրկվում են միայն 3808 ապրանքային դիրքի այն ապրանքները, որոնք պարունակում են հետեւյալ նյութերից մեկը կամ մի քանիսը. ալդրին (ISO), բինապակրիլ (ISO), կամֆեքլոր (ISO) (տոքսաֆեն), կապտաֆոլ (ISO), քլորդան (ISO), քլորդիմեֆորմ (ISO), քլորբենզիլատ (ISO), ԴԴՏ (ISO) (քլոֆենոտան (INN), 1,1,1-տրիքլոր-2,2-բիս(պ-քլորֆենիլէթան), դիէլդրին (ISO, INN), 4,6-դինիտրո-օ-կրեզոլ (ԴՆՕԿ (ISO)) կամ դրա աղերը, դինոսեբ (ISO), դրա աղերը կամ բարդ եթերները, էթիլենդիբրոմիդ (ISO) (1,2-դիբրոմէթան), էթիլենդիքլորիդ (ISO) (1,2-դիքլորէթան), ֆտորացետամիդ (ISO), հեպտաքլոր (ISO), հեքսաքլորբենզոլ (ISO), 1,2,3,4,5,6-հեքսաքլորցիկլոհեքսան (ՀՔՀ (ISO)), այդ թվում՝ լինդան (ISO, INN), սնդիկի միացություններ, մետամիդոֆոս (ISO), մոնոկրոտոֆոս (ISO), օքսիրան (էթիլենօքսիդ), պարատիոն (ISO), պարատիոնմեթիլ (ISO) (մեթիլպարատիոն), պենտաքլորֆենոլ (ISO), դրա աղերը կամ բարդ եթերները, ֆոսֆամիդոն (ISO), 2,4,5-Տ (ISO) (2,4,5-տրիքլորֆենօքսիքացախաթթու), դրա աղերը կամ բարդ եթերները, տրիբութիլանագի միացություններ:

   3808 50 ենթադիրքում նաեւ ընդգրկվում են փոշի առաջացնող, փոշենման բաղադրությունները, որոնք պարունակում են բենոմիլի (ISO), կարբոֆուրանի (ISO) եւ թիրամի (ISO) խառնուրդ:

2. 3825 41 եւ 3825 49 ենթադիրքերում «բանեցված օրգանական լուծիչներ» եզրույթը նշանակում է թափոններ, որոնք գերազանցապես պարունակում են օրգանական լուծիչներ՝ տվյալ վիճակում որպես առաջնային մթերքներ հետագա օգտագործման համար ոչ պիտանի՝ անկախ այն բանից՝ նրանք նախատեսված են լուծիչների վերականգնման համար, թե՝ ոչ:

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
3801	Արհեստական գրաֆիտ, կոլոիդային կամ կիսակոլոիդային գրաֆիտ, նյութեր՝ ստացված գրաֆիտի կամ ածխածնի այլ ձեւերի հիմքով՝ մածուկների, բլոկերի, թիթեղների կամ այլ կիսապատրաստվածքների տեսքով.	
3801 10 000 0	– արհեստական գրաֆիտ	–
3801 20	– կոլոիդային կամ կիսակոլոիդային գրաֆիտ՝	
